ւիրէ· ահա երկու տարի է որ խաղաղ եմք»։
Ունէին ժ զօմէչ, ճ ոչխար, ժԵ եղն։ Անտի
գնացաք մեծ անտեսաունն, տեսաք մեծ թօն-
տիր մի, որ եզ մի կու մէկնէր· եւ ասին թէ 110
«որչափ ադր եւ փոչի լինի ասա եւ թօնիրս՝
մեք բնաւ չեմք աւիլել· վաղմնէ կ՝ելնեմք
աւելած դտանեմք»։ Եւ ասին թէ կաղ դեւ մի
կայ, որ սուրբ Կարապետն անդ թողել է սպա-
սաւոր վանաց։ 115

Եւ ի ճախ կողմն մատուռ մի այլ տեսաք·
եւ ասին· Կին մի իշխանի չինել է զայս· կամէր
մտանել ի ներս եւ չթողուին, զի կնոջ հրա-
ման չկար· եւ նա բռնութեամբ եմուտ ի ներս
եւ ել սուրբ դերեզմանէն զօրութիւն, զի որ- 120
պէս այր մի զրեհաւոր եհար դեղարդեամբ եւ
սպան զնա· եւ թաղեցաւ ասա։ Եւ ի դուրս
ելեալ յարեւելից կողմն ընդդէմ դռան էր
դուպա մի փոքրիկ որպէս աշտարակ, զոր
Ցարութիւն կոչեն· եւ մտեալ ի ներս՝ տեսաք 125
սեղան· եւ երկրպագեալ ելաք անտի։ Եւ ասին
թէ դուպիս ներքեւն դեւք են արգիլած· եւ
մեք եղեալ ունկն ի դետնի՝ այլ եւ այլ ձայնս
լսեցաք ահարկու։ Եւ հուպ նմին Ինանակեան
աղբերն մերձ միմեանց, ազնիւ եւ դեղեցիկ 130
ջուրք։ Եւ էր դուռ մի մեծ քան զայլսն, ուր
ասին թէ Լուսաւորիչն մկրտութիւն է արել·
եւ իբրեւ ըմպէաք՝ չկարցաք իրեք կում առ-
նուլ ի սաստիկ սառնութենէն։ Եւ այլ առաջ

112 *յաւիլել։* — 113 *յաւիլած։* — 123 *ընդդէմ։*
— 128 *յունկն։*